

## ՔԱՐԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՂԱՐԻ ՏՎՀՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ- ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

«Գնացէք այսուհետև, աշակերտնեցէք զա-  
մենայն հեթանոս, մկրտնեցէք զնոսա լո-  
նուն Նոր և Որդոյ և Նոգոյն Սրբոյ»:  
(Մագի. ԻԼ 19)

Սույն թվականի հունվարի 14-ին, Ս. Նովհաննես Կարապետի գրոնի նախօրյա-  
կին, Մայր Տաճարի վեհաշուր և լուսեղեն կամարների ներքո գեղի ունեցավ քահա-  
նայական ձեռնադրություն՝ բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Ս.Տ Գարեգին Բ Վեհա-  
փառ Հայրապետի:

Ձեռնադրության այդ հիասքանչ խորհուրդը փոխանցվել է դեռևս մեր Տեր Հիսուս Քրիստոսից: Մեր Փրկչի հրաշափառ համբարձումից հետո առաջալները «հրամա-  
նաւն Սրբոյ Նոգոյն» և «Պետքու առաջյահի ձեռամբ Նակորոս Տյառնեղորդ կարգե-  
ցին Երուսաղեմի առաջին եպիսկոպոս ու քահանայապետ:

Առաքելավանդ այդ կանոնների պահպանման և ժողովրդի հոգևոր պետքերը քա-  
վարաբեկու համար էր, որ յոթ շնորհալի սարկավագներ, որոնք իրենց պատրաստա-  
կամությունն ին հայդնել աշակերտներու և հետվելու Նայ Առաքելական Սուրբ Եկե-  
ղեցու կանոններին, «կամօքն Աստուծոյ» արժանացան քահանայական ձեռնադրու-  
թյան՝ Արքակ սրկ. Սահակյան, Աշոտ սրկ. Ղազարյան, Սամվել սրկ. Կիրակոսյան,  
Հայկ սրկ. Պաուշյան, Արտեմ սրկ. Պափուրյան, Բարեկեն սրկ. Նանյան և Արման սրկ.  
Սարոյան՝ խարբավիլակությամբ Տ. Եղիշիկ եպս. Պետքոսյանի:

Հսկու Հայսարքանյայց Առաքելական Եկեղեցու Ձեռնադրության Մաշփոցի, հուն-  
վարի 13-ին, Անվանակոչության գրոնի իրիկնամուտին, Մայր Տաճարի Իշման Ս. Սեղանի առջև գեղի ունեցավ բարեշնորի սարկավագների ընծայման կարգը՝ «կո-  
չումն քահանայութեան»:

Քաղցրաւոր «Նայեաց ի մեզ» շարականի հնչյունների ներքո ընծայացուները  
ծնրադիր մոդեցան Եայսկոպոսապետին և, խարբավիլակ Սրբազն Տոր «Հրամա-  
յան Տէր օրինութեամբ ասել» ազդակից հետո, ձեռնադրու Հայսապետն ընծայացու-  
ների համար հայցեց Սուրբ Հոգու շնորհը՝ դրան ավելացնելով նաև իր հայրապետա-  
կան օրինությունը: Արարողության խարբավիլակ Եղիշիկ եպս. Պետքոսյանը վկայեց  
ընծայացուների հոգևոր ու միավոր պատրաստականության, ինչպես նաև Հայսա-



(Zwischen 1920-25) S. Ehrengut umgebaut. Umbau mit dem Bauhaus-Meister  
Ludwig Mies van der Rohe. S. 0 wurde ein neuer Raum für die Ausstellung  
der Bauhaus-Ausstellung. S. 1 wurde ein Raum für die Ausstellung  
der Deutschen Werkkunst. S. 2 und 3 wurden als Ausstellungsräume  
für die Ausstellung der Deutschen Kunst genutzt. S. 3 und 4 waren  
ausgestattet mit einer großen Treppe, die zu den oberen Stockwerken führte.

դամայց Առաքելական Եկեղեցու որպես քահանա անձնագործ պատրաստակամության մասին: Այսուհետո «ի ծովներ... առաջի սեղանոյ իշման փեղոյն» ընծայալները հանդիսավոր ընթերցեցին Ս. Գրիգոր Տաթևացու սահմանած «Հաւափոյ խոսդուկանութիւնը», իբրև ուխտի նշան: «...ճշմարդութեամբ եւ ուղղութեամբ խղճի մրացու և սրբիս երդում զերդումն սուրբ ըստ առաջիկայ պայմանաց»:

Խորիրդավոր ծիսակապարությունն ավարտվեց «Պահպանիչ»-ով և Տերունական աղոթքով:

Հաջորդ օրը, կիրակի առավորյան, Մայր Տաճարի Սուրբ Սեղանի վրա մարդուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագին էր Ն.Ս.Օ.Ս.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետոր: Ծննդաց Սուրբ Պատարագի, «Զի ողորմած եւ մարդասէր ես» աղոթքից հետո, խարդավիրակ Սրբազն Հայրն ընծայացուներին ծնրադիր առաջնորդեց Ավագ Խորան՝ առ ովս ձեռնադրող Հայրապետիք: Վկայելով նրանց հոգևոր ու մրավոր հասունության մասին: «Գիտեմք եւ վկայեմք զսոսա արժանաւոր գոլ՝ առ ի բարենալ զլուծ ասպիճանաց», խնդրեց Եպիսկոպոսապետին, որպեսի սարկավագներին արժանացնի սրբալոյս խորիրդին՝ ձեռնադրությանը: Խորդավիրակ Սրբազն Ծոր «Ընկացի գրեա Տէր» ազդարարությունից հետո նվիրյալները «ձեռու ի վեր առեալ» շրջվեցին դեպի ժողովուրդ և կնքեցին իրենց սրբազն ուխտը՝ հրաժարվելով աշխարհիկ կյանքից: Այս ընթացքում հնչեց հոգեպարար և ոգեշունչ «Ասքուածային և երկնավոր շնորհ...» շարականը, և նվիրյալները կոչվեցին «ի սարկաւագութենէ ի քահանայութիւն»: Այսուհետո նորընծաները ծնկաչքը մոլեցան Եպիսկոպոսապետին, և նա ձեռնադրելով յուաքանչյուրին՝ արքասանեց. «Ես դնեմ զձեռու ի վերայ սորա, և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զասպիճան քահանայութեան» աղոթքը: Նորընծաներին, որպես քահանայական իշխանության խորիրդանիշ, շնորհվում է փիլոն, շուրջառ և սաղավարփ, որից հետո Ավագ Սուրբ Սեղանի վարագույրը փակվում է, որ նորընծաները զգեստավորվում են:

Համապատասխան երգեցողություններից և սաղմոսասացություններից հետո, մոլենում է այդ սրբազն արարողության ամենախորիրդավոր պահը: Հանդիսավորակես Ավագ Սուրբ Սեղան է քերվում Կենարար և Սրբալոյս Մյուսոնվ լի Աղավնին, որն էլ իր անջնջելի կնիքն է թողնում նորընծաների վրա: Հայոց Հայրապետոր Սրբալոյս Մյուսոնվ օծում և օրինում է յուրաքանչյուրի ճակարը, աջ և ձախ ձեռքերը՝ անվանակոչելով Արքակ սրկ. Սահակյանին՝ Տ. Վաղեփիս քահանա, Աշոր սրկ. Ղազարյանին՝ Տ. Վիրապ քահանա, Սամվել սրկ. Կիրակոսանին՝ Տ. Խորեն քահանա, Դայկ սրկ. Պառշյանին՝ Տ. Մկրտիչ քահանա, Արտեն սրկ. Պատույանին՝ Տ. Մամրէ քահանա, Բարկեն սրկ. Նանյանին՝ Տ. Վազգեն քահանա, և Արման սրկ. Սարոյանին՝ Տ. Գևորգ քահանա: Օժման արարողությունից հետո նորընծաներն Ավագ Խորանից հղեցին իրենց անդրանիկ օրինությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Եկեղեցում հավաքված հոգևորականաց դասին և հավարավոր ժողովրդին համակել էր որախությունն ու քերկրանքը, քանզի ևս յոթ հոգի հոժարակամորեն իրենց

կորովն ու եռանդը ներդրեցին ի նպաստ Հայաստանյաց Առաքելակիմն Սուրբ Եկեղեցու և Ազգի Հայոց:

Յավարփ Սուրբ Պատրարքի Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսն իր հայրապետական օրինությունն ու շնորհավորանքի խոսքն ուղղեց նորունաներին և հայապացյալներին:

«Փա՛ռք քեզ, Աստուած, փա՛ռք քեզ, յաղագ ամենայնի, Տէ՛ր, փառք քեզ»:  
Միշելի՛ բարեպաշտ հավատացյալներ.

Օրիներգության այս բառերը մեր շորթերից որպես գոհարանական աղոթք ենք առ Աստված բարձրացնում՝ ունենալով, արդարն, փառարանության բազում առիթներ: Մենք փառք ենք դաշին Աստվուն, որ ձեզ հետ միասին շնորհին արժանացանք դիմավորելու երրորդ հազարամյակը, որ բացվում է հայոց կյանքում քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հոգակելու 1700-ամյակով: Մենք փառարանություն ենք առ Աստված բարձրացնում, որ խորհրդային անաստվածության տարիները փետովեցին, և մենք նոր դար, նոր հազարամյակ մուտք ենք գործում Հայոց անկախ պետականությամբ, հավատքի Լուսավորչի կանքեղի ջահը վերստին վառված: Մենք փառք և գոհություն ենք առ Աստված բարձրացնում, որ Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին այսօր վերստին նորացած իր առաքելությունն է իրականացնում մեր ժողովրդի կյանքից ներս՝ կրթական հոգևոր հաստարություններից նոր սերունդ հասցնելով մեր ժողովրդի սպասավորության նվիրական և սուրբ գործին: Մենք փառք և գոհություն ենք առ Աստված բարձրացնում այսօրվա համար, որ արժանի դարձրեց մեզ աղոթքով, ինդրանք ու հայով մասնակիցը լինելու ձեռնադրության սրբազն այս արարողությանը, որին յոթ ուսիւղաներ իրենց վճռականությամբ ծնրադրեցին Սուրբ Անդրանիկ առօս Սիածնաեց՝ իրենց ծառայության ուսիւղը կարարելով մեր ժողովրդին և մեր Եկեղեցուն: Նրանցից չորս սիրելիներ պիտի երեկոյան մասնաւոր արարողությամբ սրբաւուն վիդարներ՝ լինելով Հայ Եկեղեցու անդամականից ներս որպես կուսակրոն քահանաներ, իսկ երեքը, որպես ամուսնացյալ սպասավորները մեր Եկեղեցու, իրենց ծառայությունը պիտի քերեն Հայաստանյաց թեմներից ներս:

Արդարի՝ «Բազում են հունձք, եւ սակա մշակք»: Դիշաբակեցինք խորհրդային անաստվածության տարիները, որոնք իրենց ավելիք դրոշնը թողեցին մեր Եկեղեցական կյանքից ներս. խոնարիկեցին բազում Եկեղեցիներ, աքսորվեցին բազում հոգևոր սպասավորներ սիրիյան խորքերը, ուր և կնքեցին իրենց մահկանացուն: Փակվեցին աղոթքի բազում տներ մեր ժողովրդի առօս, սակայն հայոց հավատքը երեք չտաղարեց ճառագելուց, երբեք դադարեց լուսավորներուց մեր ժողովրդի ճանապարհը առ Աստված ձգվող՝ շնորհիւ այս նվիրյալ Հայրապետների, որոնց ամուսներով կնքե-

ցինք այսօր մեր նոր ձեռնադրյալ, օջակ գավակներին, շնորհիվ Սկրուի Խորիս, Խորեն Սուրադրելյան, Գնորդ Չորեցյան, Վազգեն Առաջին և նաև Ի դարավարութին գահակալած Գարեգին Առաջին երանյալ Տայրապետների:

Սիրելի նոր ձեռնադրյալ գավակներ մեր Եկեղեցու.

Տայրապետներ, որոնց անունները մենք քիչ առաջ թվարկեցինք, կերպեցին քաններորդ դարի մեր ժողովրդի և մեր Եկեղեցու պատմությունը, կերպեցին անմնացորդ նվիրումով, անհուն զոհաբերություններով, իրենց հավատքով և իրենց հայրենասիրությամբ, դժվարին պայմաններում, ծանր վիճակներում հանձնառու եղան կրնելու ամեն զրկանք, ամեն չարչարանք, ամեն դրասպանք, վասն ազգի և վասն Դիտուի Քրիստոսի: Նրանք իրենց առջև ունեին կերպարը մեծ վարդապետի, որ Գողորթա բարձրանալով և խաչի վրա կանգնելով հաղթեց, հաղթանակեց իր սիրով, հաղթանակեց երբեք չմշագող և չմահացող հույսով ու անսասան հավատքով առ Ասրված: Այդպիս էլ մեր Տայրապետները, պահենով իրենց հավաբարությունը մեր Տիրոջ՝ Դիտու Քրիստոսին, և պատգամներին մեր Սուրբ Տայրերի, կարողացան դարը լուսավոր հավատքի առաջնորդներ և նոր հազարամյակը մեր առջև բանալ հույսով, հավաբով, երազներով ու տեսիլքով լեցուն:

Մենք անունները մեր Տայրապետների դրեցինք ձեզ վրա՝ հավաբարով, որ, օրինակն ունենալով երանց կյանքի և հավաբարով գործերի, պիտի նոյն նվիրումով և նոյն սիրով ձեր ծառայությունը մասրուցեք մեր ժողովրդին, պիտի կարողանաք, Քրիստոսին ունենալով ձեզ առաջնորդող, Նրա ծանր լուծք թեթևությամբ կրել ձեր ուսերի վրա՝ երբեք չորկարանալով ձեր հավատքի մեջ, երբեք չորկարանալով տեսնելու այն ճշնարիդ ուղին, որ առաջնորդում է մեր ժողովրդին դեպի փրկություն և դեպի իր դարավոր երազների իրականացում: Ինձ համար և, վարահարար, մեր ժողովրդի բոլոր գավակաց համար ցնծության, բերկուանքի, ուրախության պահ է այս պահը, երբ Մայր Առողի Ավագ Խորանի վրա կանգնած են յոթ ուսուցչաներ, որ պիտի գան լուսնելու, համարելու շարքերը հայ Եկեղեցականաց, որ նուր է և անքավարար՝ այսօրվա մեր հոգևոր առաքելությունը մեր ժողովրդի կանուն ամբողջապես, արդյունավելի, արգասաքեր կերպով իրականացնելու համար: Ժողովուրդը պետք ունի սպասավորի, սակայն այն սպասավորի, որը գիտել դարւանական անհուստության մեջ գույք բերելով լուսավոր ճանապարհներ, հույսի ճանապարհի վրա կանգնեցնելուվ մեր ժողովրդի գավակաց: Ժողովուրդը պետք ունի հանձնառու, նվիրյալ, անձնագործ, ծառայասեր Եկեղեցականի, որպեսզի կարողանա իր հավատքը

միշտ վառ պահել և իր քայլը միշտ ուղղյալ դեպի սրբազն բաճարները, դեպի վանքերը, որոնք առաջնորդում են մեր ժողովրդին ահա 1700 տարիներ դեպի Աստված: Մենք այս վարահոգայամբ և հավատքով մեր ձեռքը դրեցինք ձեզ վրա և օծեցինք ձեզ, կնքենով մեր երանաշնորհ Հայրապետների անուններով ձեզ, որպես պարտավորություն պիտի ընկալեք արժանացումը ձեր այդ մենց շնորհին՝ այսոց Հայրապետների լուսավոր անունների կրումին, և պիտի կարողանաք ձեր կյանքով, ձեր վարքով ու ընթացքով միշտ վարավորել նրանց անունները, լուսի պասկ հյուսել նրանց անվան շուրջ հավաքո ձեր գործերով:

Այս ուրախ, այս բերկրաչափ առիթով ես իմ շնորհավորանքն եմ բերում մեր բարեկացր հավատացրալ ժողովրդին, շնորհավորում եմ նաև մեր միաբանությանը, որոնք սիրով, ուրախությամբ պիտի գրկեն ձեզ՝ իրենց շարժերում ընդունելով: Մեր գնահատանքը, մեր շնորհավորանքը ուզում ենք բերել նաև ծնողաց, բարեկամներին, հարազարդներին ձեր, որոնք տարիներ շարունակ իրենց սպասումներն են ունեցել, թե ե՞ր պիտի արժանի լինեն այս օրվան, գետնելու ձեզ կանգնած խորանի առջև ձեր ուխտը կապրենիս: Մենք այս առիթով նաև մեր գնահատանքն ենք ուզում բերել մեր մանկավարժներին կրթական հասկավորությանց, նրանց բնօրեն վարչություններին և բոլոր, բոլոր այն անձանց, որոնք մաս ու բաժին, լուսա ունեն ձեր ամի, ձեր հասակի, մոքով ու հոգով ձեր զորացման ազնիվ գործի մեջ:

Մեր աղոթքն է, որ Տերն արգասարեր դարձնի ավագանը մեր Մայր Եկեղեցու, որպեսից պիտի ծնվեն սպասավորներ Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու և հավատավոր մեր ժողովրդի, մեր աղոթքն է, որ մեր սպասավորները արժանիորեն վասրակեն սերն ու հարզանքը հավատացրալ հայորդյաց և իրենց հավատքի կենդանի՝ գործերով, իրենց նվիրումով, իրենց սիրով: Մեր աղոթքն ու մաղթանքն է նաև, որ մեր բարեպաշտ ժողովրդի զավակումք գիրնաև, գնահատեն հանձնառությունը իրենց սպասավորող Եկեղեցեկանաց, որոնք Միաձնաւէց Սուրբ Խորանի առջև ծնրադրել և ուխտել են ծառայելու ձեզ անվերապահորեն և ի պահանջել հարկին նաև զոհաբերել իրենց կյանքը ձեր հոգևոր շնորհյան, ձեր կյանքի բարօր խաղաղ ընթացքի համար: Միաձնաւէց սուրբ այս Տաճարի Ավագ Խորանից մեր աղոթքն ենք նաև առ Աստված բարձրացնում, որ Տերը պահի մեզ միասնական, ամբողջ ու անխոռվ. ժողովուրդ և պետություն այս համամիասնությամբ է նոր հազարամյակը սկսել՝ կյանքը դարձնելու համար երջանկարեր, բարեքեր, հայոց զավակաց համար ի սիրուս աշխարհի, որպեսի այս բարում, այս հազարամյակում չկրկնվեն մեր ժողովրդի կյանքում այն աղեղները, այն ողբերգությունները, որ անդամակարգին մեզ ու պանդուստ դարձրեցին, ցրիվ Կովեցին ողջ աշխարհով մեկ մեր բեկորները, որպեսզի մենք ապավինենք ազգային միասնական մեր այդ ու-

ժին, կարողանանք մեր առջև բարձրացնել, մեր առջև հատնող բոլոր գեւասկի դժվարություններն ու խոչընդուրները՝ ապավիճած մեր հայրենիք Աստծուն, ապավիճած մեր սուրբ հայրենին, սրբազն հավատքին՝ հաղթանակել և փառքը միշտ մեր շուրջերի վրա կրել, որպես գոհարանական աղոթք առ Ասլուած միշտ արդասանելով. «Փանք քեզ, Աստված, փանք քեզ, յաղագ ամենայնի, Տէր, փանք քեզ»:

Տիրոջ սերը, շնորհը և խաղաղությունն եւմ հայցում, որ յինի մեզ հետ այժմ և միշտ և հավիրյան ամեն»:

Նուն օրը, երեկոյան ժամերգությունից առաջ, Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ վերի ունեցավ նորաօծ S. Ավելիս, S. Մկրտիչ, S. Վազգեն և S. Գևորգ քահանաների վեղարի վկչությունը: Համաձայն Հայ Եկեղեցու կարգաց և կանոնաց, կուսակրոն քահանաները, ի տարբերություն ամուսնացյալների, կրում են վեղար՝ ի նշան կոսակրոնության, և ապրում վանական կյանքով:

Գևորգյան Հոգևոր Ծեմարանի վեսչությունն ու ուսանողությունը նոյյնպես ջերմագին շնորհավորում են նորապսակ քահանաներին և մադթում, որ անսասան մնան իրենց առաքելության մեջ, այն հոյսով ու հավագով, որ նրանք ողջ ուժերն ու եռանդն ի սպաս կղնեն ի ծառայություն և ի բարօրություն Հայաստանյաց Եկեղեցու և նրա հավաքավոր զավակաց:

«Եւ նորա եկալ քարոզէին ընդ ամենայն երկիր Տեսոն գործակցութեամբ և գրան հասպարէին ամենայն նշանօք, որ երթայր զենք նոցա» (Մարկ. ԺԶ 20):

### ՀԱՅԿ ԴՊԻՐ ԲԱՐՄԵՂՅԱՆ Գևորգյան Հոգևոր Ծեմարանի Բ լսարանի սան

**Տ. ԱՎԵՏԻՍ ԱԲԵՂԱ ՄԱՐԱԿՅԱՆ**

(ավագանի անունը՝ Արտակ)

Ծնվել է 1975 թ. նոյեմբերի 22-ին Երևան քաղաքում:

1983-1993 թթ. սովորել և ավարտել է Զվարդենցի № 12 միջնակարգ դպրոցը:

1993 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանց և ավարտել 1998 թ.:

1997 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի:

1998-1999 թթ. ուսումը շարունակել է Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանում:

2000 թ. Գևորգյան Հոգևոր ճեմարանում պաշտպանել է ավարտածան՝ «Սուրբ Գրիգոր Նյուսացին և նրա «Մովսեսի կյանքը» երկը» թեմայով:

2001 թ. հունվարի 14-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի:

**Տ. ՄԿՐՏԻՉ ԱԲԵՂԱ ՊՈ-ՌՃՅԱՆ**

(ավագանի անունը՝ Հայկ)

Ծնվել է 1975 թ. օգոստոսի 13-ին Էջմիածին քաղաքում:

1982-1992 թթ. սովորել և ավարտել է Վեհափառ Խ. Արույշյանի անվան միջնակարգ դպրոցը:

1993 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանց և ավարտել 1998 թ.:

1998-1999 թթ. ուսումը շարունակել է Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանում:

1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալիքյանի:

2000 թ. Գևորգյան Հոգևոր ճեմարանում պաշտպանել է ավարտածան՝ «Խոսրով Անձնացու «Պատրարագի մեկնության» ասպրանականությունը» թեմայով:

2001 թ. հունվարի 14-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի:

**Տ. ՎԱԶԳԵՆ ԱԲԵՂԱ ՆԱՆՅԱՆ**

(ավագանի անունը՝ Բարկեն)

Ծնվել է 1976 թ. հոկտեմբերի 15-ին Երևան քաղաքում:

1983 թ. ընդունվել է Վեհափառ Խ. Արույշյանի անվան № 20 միջնակարգ դպրոցը և 1993 թ. ավարտել № 114 միջնակարգ դպրոցը:

1993 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանց և ավարտել 1998 թ.:

1998-1999 թթ. ուսումը շարունակել է Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ծեմարանում:

1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ S. Ուկան արքեպս. Գալիքարյանի:

2000 թ. Գևորգյան Հոգևոր Ծեմարանում պաշտպանել է ավարտաճառ՝ «Սուրբ Հոգու եղբարանությունը» և «Բխում» եզրի արդացոլումը հայ դավանարանական ասդրվածարանության մեջ» թեմայով:

2001 թ. հունվարի 14-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Ն. U.O.S.S. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի:

### **Տ. ԳԵՎՈՐԳ ԱԲԵՂԱ ՄԱՐՈՅԱՆ**

(ավագանի անունը՝ Արման)

Ծնվել է 1977 թ. հուլիսի 28-ին Մասիս քաղաքում:

1983-1993 թթ. սովորել և ավարտել է Մարմարաշենի միջնակարգ դպրոցը:

1993 թ. ընդունվել է Աևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց և ավարտել 1998 թ.:

1998-1999 թթ. ուսումը շարունակել է Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ծեմարանում:

1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ S. Ուկան արքեպս. Գալիքարյանի:

2000 թ. Գևորգյան Հոգևոր Ծեմարանում պաշտպանել է ավարտաճառ՝ «Գրիգոր Խլաթեցու Հայսմավուրքն ըստ Էջմիածնի մագիստրադարանի ձեռագրերի» թեմայով:

2001 թ. հունվարի 14-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Ն. U.O.S.S. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի:

### **Տ. ՎԵՐԱՊ ՔԵՐԱՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ**

(ավագանի անունը՝ Աշոտ)

Ծնվել է 1973 թ. Էջմիածնի քաղաքում:

1980-1990 թթ. ուսանել է Զվարթնոցի № 10 միջնակարգ դպրոցում:

1991 թ. ընդունվել է Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ծեմարան և ավարտել 1997 թ.:

1996 թ. ձեռնադրվել է սարկավագ:

2000 թ. դեկտեմբերի 15-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դպրանը 1771-1800 թթ.» թեմայով:

2001 թ. հունվարի 14-ին ձեռնադրվել է քահանա՝ ձեռամբ Ն. U.O.S.S. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի:

**Տ. ԽՈՐԵՆ ՔԱՌԱՆԱԿԻՐԱԿՈՍՅԱՆ**  
(ավագանի անունը՝ Սամվել)

Ծնվել է 1975 թ. մարտի 15-ին Էջմիածին քաղաքում:

1980-1990 թթ. սովորել և ավարտել է Արարածինի միջնակարգ դպրոցը:

1992 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց և ավարտել 1997 թ.:

1997-1998 թթ. ուսումը շարունակել է Էջմիածին Գևորգյան Հոգևոր ճեմարանում:  
1998 թ. սեպտեմբերի 20-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ծեռամբ S. Աբրահամ եպս.

Մկրչյանի:

2000 թ. Գևորգյան Հոգևոր ճեմարանում պաշտպանել է ավարտաճառ՝ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին «Էջմիածին» շաբաթաթերթը» թեմայով:

2001 թ. հունվարի 14-ին ձեռնադրվել է քահանա՝ ծեռամբ Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի:

**Տ. ՄԱՍԹՐԵ ՔԱՌԱՆԱԿԻՐՅԱՆ**

(ավագանի անունը՝ Արսեն)

Ծնվել է 1976 թ. ապրիլի 6-ին Էջմիածին քաղաքում:

1983-1993 թթ. սովորել և ավարտել է փեղի Ռ. Պատրիարքյանի անվան № 9 միջնակարգ դպրոցը:

1993 թ. ընդունվել է Էջմիածին Գևորգյան Հոգևոր ճեմարան և ավարտել 1999 թ.:

1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ծեռամբ S. Օսկան արքեպս. Գալիկայանի:

2000 թ. Գևորգյան Հոգևոր ճեմարանում պաշտպանել է ավարտաճառ՝ «Ուսասարանի հայկական գաղթօջախները և թեմի հասկադրությունը» թեմայով:

2001 թ. հունվարի 14-ին ձեռնադրվել է քահանա՝ ծեռամբ Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի: